«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ ՓԲԸ
“ARMENIA” INTERNATIONAL AIRPORTS CJSC
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
OCCUPATIONAL HEALTH AND SAFETY POLICY

«Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) գործող օրենսդրությամբ և ներքին կանոնակարգերի շրջանակներում հանձն է առնում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ իր աշխատողների, ուղևորների, օդանավակայանի տարածքում գործունեություն ծավալող կապալառուների, գործընկերների և այցելուների անվտանգ միջավայրի պահպանման համար:

Ընկերությունը գիտակցում է, որ մարդիկ իր ամենաարժեքավոր ռեսուրսն են, հետևաբար մասնագիտական գործունեության արդյունքում ստացված վնասվածքների և վտանգավոր աշխատանքային պայմանների կանխարգելումը Ընկերության համար հանդիսանում է հիմնավոր սկզբունք:

Այդ նպատակով Բարձր ղեկավարությունը ապահովում է տեսանելի առաջնորդություն և հաշվետու է սույն քաղաքականության արդյունավետ իրականացման համար՝ ապահովելով, որպեսզի առողջության, անվտանգության և բարեկեցության հարցերը ներառվեն բոլոր բիզնես որոշումներում, գործառնական պլանավորման մեջ և ամենօրյա աշխատանքում, ինչպես նաև տրամադրվեն անհրաժեշտ ռեսուրսներ և ապահովվեն համապատասխան վերահսկողության մեխանիզմների ներդնում:

Ընկերությունը հանձնառու է իր իրավասությունների, գործող օրենսդրության և ներքին կանոնակարգերով սահմանված պահանջների շրջանակներում իր տարածքներում աշխատող կամ դրանցից օգտվող յուրաքանչյուր անձի համար ձևավորել և պահպանել անվտանգ և առողջ միջավայր:

Այդ նպատակով Ընկերությունը պարտավորվում է՝
- ապահովվել գործող օրենսդրությամբ սահմանված պահանջների իրականացում,
- անհրաժեշտ միջոցների կիրառմամբ կանխել աշխատանքային գործունեության արդյունքում առաջացող վնասվածքները և մասնագիտական հիվանդությունները,
- անհրաժեշտ միջոցների կիրառմամբ վերացնել/վերահսկել վտանգները և նվազեցնել ռիսկերը,
- շարունակաբար բարելավել առողջության, անվտանգության և բարեկեցության ապահովմանն ուղղված կատարողականությունը:

Ստորաբաժանումների ղեկավարները և վերջիններիս կողմից նշանակված անձինք իրենց լիազորությունների շրջանակներում պատասխանատու են անվտանգության պահանջների պահպանման, ռիսկերի պատշաճ վերահսկման և անվտանգ վարքագծի խթանման համար:

Ընկերության բոլոր աշխատողներից և կապալառուներից ակնկալվում է՝
- աշխատել հաստատված անվտանգության ընթացակարգերի և հրահանգների համաձայն,
- ցուցաբերել զգուշություն/զգոնություն իրենց և այլ անձանց առողջության և անվտանգության նկատմամբ,
- անհապաղ տեղեկացնել վտանգների, վտանգավոր պայմանների, պատահարների և դրանց հնարավոր առաջացման աղբյուրների, գրեթե պատահարների վերաբերյալ:

Սույն քաղաքականության պատշաճ իրականացման նպատակով, Ընկերությունը հանձն է առնում ստեղծել և պահպանել դրա իրագործման համար անհրաժեշտ միջոցներ, և ապահովվել հետևյալ միջոցառումների իրականացում՝

- Աշխատանքային գործունեության հետ կապված վտանգների բացահայտում և ռիսկերի գնահատում,
- Վտանգների վերահսկում և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովմանն ուղղված համակարգերի ներդրում և դրանց պահպանում,
- Համապատասխան տեղեկատվության և հրահանգների տրամադրում, անհրաժեշտ ուսուցումների և հրահանգավորումների կազմակերպում, վերահսկողության իրականացում և անհրաժեշտ այլ ռեսուրսների տրամադրում,
- Աշխատողների, կապալառուների և համապատասխան շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների կազմակերպում և հրահանգավորում,
- Աշխատանքի Անվտանգության Կատարողականի մշտադիտարկման նպատակով՝ ստուգումների, աուդիտների և պարբերական վերանայումների իրականացում,
- Պատահարների պատշաճ ծառայողական քննության և դրանց կրկնվելը բացառելու նպատակով ուղղիչ միջոցառումների ներդրում,
- Գործառնական և ռազմավարական պլանավորման մեջ Առողջության, անվտանգության և բարեկեցության հարցերի ինտեգրում:

Սույն քաղաքականությունը պարբերաբար կվերանայվի՝ ապահովելու համար դրա համապատասխանությունը Ընկերության գործունեությանը, ռիսկերին, կազմակերպչական փոփոխություններին, համապատասխան օրենսդրական պահանջներին և կիրառելի առաջատար լավագույն փորձին: Սույն քաղաքականության ցանկացած թարմացման վերաբերյալ Ընկերության աշխատողները և այլ շահագրգիռ կողմերը կլինեն տեղեկացված:

“Armenia” International Airports CJSC (hereinafter the Company), within the framework of applicable legislation and internal regulations, undertakes to implement the necessary measures to ensure a safe environment for its employees,passengers, contractors, partners operating within the airport, and visitors.

The Company recognizes that people are its most valuable asset therefore, the prevention of work-related injuries and unsafe working conditions is a fundamental principle.

For this purpose, Senior Management provides visible leadership and is accountable for the effective implementation of this policy by ensuring that health, safety, and wellbeing considerations are integrated into all business decisions, operational planning, and day-to-day activities, as well as by providing the necessary resources and ensuring the establishment of appropriate control mechanisms.

Within the scope of its authority and in compliance with applicable legislation and internal regulations, the Company is committed to creating and maintaining a safe and healthy environment for every individual working within or using its facilities.

To achieve this, the Company undertakes to:

- Ensure compliance with applicable legal requirements,
- Prevent work-related injuries and occupational diseases through the implementation of necessary measures,
- Eliminate and/or control hazards and reduce risks through appropriate measures,
- Continually improve health, safety, and wellbeing performance.

Department managers and their designated personnel are responsible, within their areas of authority, for ensuring compliance with safety requirements, proper control of risks, and the promotion of safe behavior.

All employees and contractors are expected to:

- Work in accordance with approved safety procedures and instructions,
- Exercise care and vigilance regarding their own health and safety and that of others,
- Immediately report hazards, unsafe conditions, incidents, potential sources of incidents, and near misses.

To ensure the effective implementation of this policy, the Company undertakes to establish and maintain the necessary arrangements and to ensure the implementation of the following measures:

- Identification of work-related hazards and assessment of risks,
- Implementation and maintenance of systems for hazard control and safe working conditions,
- Provision of relevant information and instructions, organization of necessary training and briefings, implementation of supervision, and provision of other required resources,
- Consultation and engagement with employees, contractors, and relevant interested parties,
- Monitoring of occupational health and safety performance through inspections, audits, and periodic reviews,
- Proper investigation of incidents and implementation of corrective actions to prevent recurrence,
- Integration of health, safety, and well-being considerations into operational and strategic planning.

This policy will be reviewed periodically to ensure its continued relevance to the Company’s activities, risks, organizational changes, applicable legal requirements, and recognized best practices. Employees and other interested parties will be informed of any updates to this policy.

Մարսելո Ֆաբիո Վենդե
Տնօրեն
Marcelo Fabio Wende
Director

Ամսաթիվ /Date 15.05.2026
Տարբերակ/version 1